Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 03790000-1

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«06» մարտի 2017թ. Տավուշի մարզ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և Բերդի ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Զվարթ Ծատուրյանի, որը գործում է Բերդի ԲԿ ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 3-ի թիվ 685-Ա հրամանը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կատարողի միջև 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-03790000 պայմանագրի
   1) հավելված 2-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի,
   2) հավելված 6-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 2-ի:
2. Սույն համաձայնագիրը իր հավելվածներով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից:

ՀՀ ԱՆ աշխատակազմի
ղեկավար՝ Ն.Զուլոյան

/ստորագրություն/

«Բերդի ԲԿ ՓԲԸ» -ի տնօրենի ժ/պ՝
Զ.Ծատուրյան

Digitally signed by TSATURYAN ZVARD 6208640067
Date: 2017.03.13 15:43:53 GMT+04:00

/ստորագրություն/